ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

18 փետրվարի 2019թ. N 40 - Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության պետի 2019 թվականի հունվարի 24-ի N 50/ -19 գրությունը

կարգադրում եմ՝

1. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության մասով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Մարտունու քննչական բաժնի վարույթում քննվող N 42157518 քրեական գործով Գեղարքունիքի մարզային քննչական վարչության պետի գրությամբ բերված փաստերն ուսումնասիրելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Պողոսյան Անուշ	- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Սարգսյան Նելսոն	- մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ
Հոդաբաշյան Վալերիկ	- մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ
Խաչատրյան Արամ	- մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ

2. Հանձնաժողովին՝ 5-օրյա ժամկետում ուսումնասիրության արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչություն:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ